



**Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01/10/2021 - 31/12/2021թթ. տվյալների ամփոփում**

Հաշտարարի գրասենյակը 01/10/2021 - 31/12/2021թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 3,887 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 3,699-ն են:

Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 3,699 բողոքներից 180-ը համաձայն «Ֆինանսական համակարգի Հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01/10/2021 - 31/12/2021թթ. Հաշտարարի Գրասենյակը քննության է ընդունել 1,485 պահանջ-դիմում:

<b>Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝</b>	<b>3,887</b>
<b>Վերաբերում են ֆինանսական համակարգին՝</b>	<b>3,699</b>
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	180
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	3,519
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	1,485
2.1. 1. Բանկերի դեմ, կապված են՝	353
• Վարկային գործարքների հետ	339

• Ավանդային գործարքների հետ	5
• Վճարահաշվարկային գործարքների հետ	8
• Այլ	1
<b>2.1. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝</b>	<b>1,103</b>
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	6
• Առողջության ապահովագրության հետ	13
• Գույքի ապահովագրության հետ	7
• Աջակցության ապահովագրության հետ	4
• Գյուղատնտեսության ապահովագրության հետ	9
• ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ՝ Բյուրո)	1,061
• Դժբախտ պատահարներից ապահովագրության հետ	3
<b>2.1. 3. Վարկային կազմակերպությունների դեմ</b>	<b>24</b>
<b>2.1.4. Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների դեմ</b>	<b>5</b>

<b>Քննության ընդունված պահանջ-դիմումների ելքեր (հատ դեպք)՝ [1]</b>	<b>1,473</b>
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	688
Պահանջը մասնակի է բավարարվել	58
Պահանջը բավարարվել է	22
Պահանջը մերժվել է	540
Պահանջի քննությունը դադարեցվել է	123
Պահանջի քննությունը մերժվել է	42

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am . Web: www.fsm.am